

ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1983—1984 թթ. ընթացքում Գեղարքունիքի տարածքում գրի ենք առել ավելի քան մեկ տասնյակ հուշապատում, որոնց զգալի մասը վերաբերում է իսլամադավանության հետևանքով հայաթափության պատմաքաղաքական դեպքերին: Հուշապատումներ ասացողները այդ դեպքերի ականատեսներ կամ մասնակիցներ էին, ու ավելի արժանահավատ է դարձնում հաղորդած նյութը:

Հուշապատումների պատմական հավաստիությունը պարզելու նպատակով հարցում ենք արել ավելի քան հինգ տասնյակ ասացողներին, որոնք առանց դուշդն ինչ փոփոխության պատմում էին նշված ժամանակաշրջանի ողբերգական իրադարձություններին վերաբերող հուշերը, ստույգ նշելով դեպքի վայրը՝ Բասարգեշար* — Զոդ, ամիսը՝ փետրվար, ժամը՝ կեսօր, եղելության մասնակիցներին՝ հական հանվան: Ասացող ականատեսը, իբրև կանոն, դեպքերին չէր միջամտում, սակայն եղելության դրամատիկական նկարագրերը կրում են նրա անհատական կնիքը: Նկարագրվող դեպքերի մոռացում կամ շփոթ ասացողների մոտ չնկատվեց: Հուշապատմող բանասացը երբեմն միայն երգային հատվածներով համեմտում էր իր ասելիքը, բանաստեղծական երանգավորում հաղորդում վերջինիս, չնդվելով բնավ հիմնական նյութից:

Սույն հուշապատումները ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում հետք թողած պատմական եղելության վերհուշն են, ապրում են բանահյուսական կյանքով, ավանդվում և փոխանցվում են սերնդի սերունդ, կրելով արտաբերիչ, ձևական փոփոխություններ և մասնակի բովանդակային տարբերակումներ: Հիմք ընդունելով դրանց բացառիկ տեղայնացումը, հիշատակվող կետերի տեղանունները (տոպոնիմները), չհրկնվող դեպքերի և դեմքերի առկայությունը, ինչպես նաև դրեմա բոլոր հուշապատմողների հարմարման վկայությունները, դրանք կառելի է համարել իբրև պատմական իրողությունների արձագանքներ և ավարտուն ու ձևավորված պատմություններ, որոնք, ի տարբերություն բնությունից ու հասարակական կյանքը հրաշապատում երանգավորմամբ ներկայացնող բանահյուսական արձակի այլ տեսակների, արտացոլում են պատմահասարակական դեպքերն ու դեմքերը իբրև ստույգ եղելություններ: Հուշապատումը, իբրև ականատեսի վկայություն, ունի իր որոշակի բանասացը, որը կամ տվյալ դեպքի ականատես մասնակիցն է և կամ նրա սերնդակիցը: Գեղարքունիքյան հուշապատումների բանասացները պատկանում են սեռատարիքային որոշակի խմբի, այսինքն՝ պատմում են 25-ն անց թե կին, թե տղամարդ և, եթե ասացողն ականատեսն է պատմվող եղելության, բացառիկ մանրամասնություններ ու բարեխղճությամբ է վերաբերվում նյութին: Նրա հոգեբանության մեջ նստած են այդ դեպքերը, նախ հետևում է դրանք և շնորհիվ ավանդույթի՝ պահպանում պատմական այդ դեպքերի և եղելությունների վերհուշը: Ժամանակագրորեն հուշապատումներն ընդգրկում են հուշապատմողի և նրա սերնդակիցների կյանքի որոշակի փուլերը՝ շուրջ 80-ամյա և երբեմն ավելի տարիների մաղեմությամբ:

Հուշապատում-եղելությունը, իբրև պատմական անցքերին ակնհայտ հուշապատմողի անկողմնակալ ու հավաստի վկայագիր, դեպքերի ժողովրդական ճշմարտացի անդադարձում՝ կոչված է անկասկալու-

* Այժմ՝ Վարդենիս:

թյամբ ու անշահախնդրությամբ վեր հանելու պատմական անձանց դիմանկարները, որոնք պատմագրության մեջ տարբեր նկատառումներով հաճախ զանց են առնվում և կամ աղավաղվելով՝ հանիրավի անտեսվում:

Մեր գրառած հուշապատումները ձևով ոչ ընդարձակ, սեղմ պատմելաոճով, երգային հատվածների զուգորդմամբ, երբեմն նաև հերոսների վիպական նկարագրերով բնութագրվող պատմություններ են՝ կառուցված իրական պատմական հենքի վրա: Բանահյուսական արձակ ժանրի այս տեսակի համար բընորոշ է ամբողջական կուտ սյուժեն՝ իր գործող անձերով: Քանի որ իրական պատմական դեպք է պատմվում, ուստի և բանասացը գրեթե տուրք չի տալիս իր երևակայությանը, այլ ձգտում է դեպքի արդեն հայտնի ու իրական սահմաններից դուրս չգալ: Ժանրային այս ուրույն նկարագրով հանդերձ պատմական հուշապատումը որոշակի ընդհանրություններ ունի պատմական ավանդությունների հետ: Պատմական ավանդությունը, թվում է, ժամանակակից հուշապատումների հնացած, շերտավորված, օտարամուտ վիպաառասպելական սյուժեներով հարակցված տարբերակն է, ասել է, թե հուշապատումը ևս մըշտահույժ պատմության բովո՞վ անցնելուց, պատումների և տարբերակների մի ողջ խումբ տալուց հետո կվերաճի պատմական ավանդության: Ներկա փուլում դրանք ժանրային մասնակի ընդհանրություններով հանդերձ ունեն էական տարբերություններ: Ավանդություններում հիշատակվող գրեթե բոլոր դեպքերը կարող են հրաշապատում երանգավորում ունենալ, մինչդեռ հուշապատումը խստիվ պահպանում է իրական պատմական դեպքի նկարագրման սահմանները:

Այն հանգամանքը, որ Գեղարքունիքի 10 հուշապատումներում չեն նկատվում ստեղծագործական մոտիվների հարակցում և հավելյալ սյուժեներ, վերկայում է ակնատես հուշապատողի և պատմական որոշակի եղելության ճշմարիտ հարաբերության ու հավաստիության մասին: Եթե բանահյուսական արձակ ժանրի նկատմամբ հուշապատումը գրավում է ոչ գործուն դիրք, ապա նույնը չի կարելի ասել երգային բանահյուսության և մասնավորապես պատմական երգի համար: Պատմական երգն ու հուշապատումը գտնվում են փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ: Հուշապատումներում հաճախ բանասացը իր խոսքը զուգորդում է պատմական երգի հատվածներով: Հուշապատումը կոչված է նաև լույս սփռելու պատմական երգի ստեղծման դրդապատճառների, ժամանակագրության վրա: Փորձենք մեկ-երկու օրինակով վեր հանել հուշապատումի և պատմական երգի փոխառնությունը:

Այսպես. 1969 թ. Վարդենիսում գրի առնվեցին երկու օրորոցային երգ, որոնք լույս ընծայվեցին «Հայ ժողովրդական օրորոցայիններ և մանկական երգեր» ժողովածուում: Երգերը ողբերգի բնույթ ունեն, յուրաքանչյուր քառյակին հաղորդում է. «Աման, աման, Սաֆար աղա, աստված քո տան դուռը շարա» երկտող կրկներգը: Ինչպես կարելի է նկատել երգի ծանոթագրություններից, երգասացը գրեթե ոչինչ չի հաղորդել երգի ստեղծման ժամանակի դրդապատճառների և երգում այդքան հիշվող Սաֆար աղայի մասին: Տարիներ հետո՝ 1983 թ., Վարդենիսի շրջանի Ակունք գյուղում 80-ամյա բանասաց Աշխեն Ղազարյանից կրկին գրառեցինք այդ երգի պատառիկներից՝ կրկնելով երկտողների հարազատ վերարտադրությամբ: Բանասացը հստակ հիշողությամբ մեզ հաղորդեց մի հուշապատում, որից պարզ դարձավ հետևյալը. 1918 թ. ցրտաշունչ ձմռանը Բասարգեշարը ծանր կացության մեջ է լինում, անընդհատ ահաբեկումներից ու պաշարումից հոգնած գյուղացիները քաշվել էին ու մեկուսացել իրենց տներում, անօրենները հարձակվում էին Բասարգեշարի վրա, կոտորում, թալանում գյուղացիներին. «Ջող գյուղում մե թուրք կար, էգի Բաքվա յանեն էր զորք ըստանում, էգի Սաֆար աղան էր, էդոր «բոլոր աղա» կասին, այնախում մարդ էր, կմտներ օթաղ, ով կհամարձակվեր մե

1 Տե՛ս «Հայ ժողովրդական օրորոցայիններ և մանկական երգեր», կազմեց Ռ. Հ. Գրիգորյան, Երևան, 1971, էջ 336, կրգ 731, 732:

ծպտուն խաներ, պլետով ռոզգի կիտեր (հարվածում, ծեծում էր — Ռ. Գ.): Իմ խոր դոսթն էր, բայց հերս միշտ կասեր, որ էդի շատ անհոգի մարդ ա, զգուշ կացեք, արուն չթափվի. էդ մարդու վրա էլ ժողովուրդ երգեր կապեց, ու կանիծեք...»:

Բավականաչափ ընդարձակ այս հուշապատման մեջ շատ մանրամասներ հաղորդվեցին այդ շրջապատման ու ժողովրդի թշնամիների կողմից հրահրվող ընդհարումների մասին, որոնց շուրջ ստեղծված 4 հուշապատումները բոլորն էլ հավաստում են եղելության նույն ժամանակը: Իսկ երգում հիշատակվող աղան՝ նույն ինքը, Զոդ գյուղի բեկ «բոյուք աղան» վարձու զինվորներով անմեղ ժողովրդի կոտորածներ կազմակերպող Սաֆար աղան է, որին ցայսօր ժողովուրդը նզովքով է հիշում:

Մանատիպ հուշապատումներ հաղորդել են նաև վարդենիսցի Աննըման Արդոյանը (1960 թ.), Մարգարիտ Համբարձումյանը (1963 թ.), Կարինե Բաբսնդյանը (1974 թ.): Այդ նույն դեպքերն են արտացոլում 1980 թ. Վարդենիսում մեր գրառած և հրատարակած հետևյալ երգի հատվածները.

Դե, լսեք, տղեք, էն քաղցրիկ ձայներ,
Մահից վախցող չեն Բասարի քաջեր,
Կարկտից առատ դնդա՜յ Բափեցին,
Կեցցեք դուք, կեցցեք, Բասարի քաջեր:
Հովհաննես ամին, զենքը հիր ձեռին,
Խրախուսում էր հայոց քաջերին,
«Դե, կովեք, տղեք, Ձեր հոգուն մատաղ,
Հաղթանակ մերն ա, մեզ էլ կմնա»²:

Իսկ ներքևի քառյակը գրի առանք 1984 թ. օգոստոսին, Ակունք գյուղում, Աշխեն Ղազարյանից:

Հովհաննես ամին շատ զորեղ մարդ էր,
Հայոց քաջերին ոտքի կիսաներ,
Մեր ու մանուկին տերություն կաներ,
Ռուսական պոլկին սիրով կսպասեր:

«Դե, լսեք տղերք...»-ի ասացողը որոշակի ոչինչ չհաղորդեց մեզ երգի ստեղծման զրդապատճառների մասին: Սակայն 1981 թ. Ակունքում գրառած նույն երգի այս պատառիկը ամբողջացրեց երգը: Ապա այն համալրվեց մի ընդարձակ հուշապատմով, որով պարզվեց, որ 1918 թ. ժողովրդի պաշտպանական մարտերի ժամանակ աչքի է ընկել վարդենիսցի 70-ամյա ծերունի Հովհաննես Արդոյանը: Նրա արտաքինն անգամ սարսափազդու է եղել կովող կողմերի համար. «Փափախի ծեր որ կտեսնին, բռնալով կփախնին»: «Իսկ Հովհաննես Արդոյանը, — վկայեց հուշապատմող Ղազարյանը, — կշրջեր հայկական զորքի դիրքերում ու կասեր՝ էնպես կրակեք. «ր շատ արուն չթափվի. էրեխի չկալի գյուլլնն, դիմացեք տղեք ջան, շուր ուսական պոլկ խասի մեզ»: Այդ նույն ծերունու հնարամտության շնորհիվ ժողովուրդը կարողանում է դիմադրել մինչև «ռուսական պոլկի» հասնելը. «Դատարկ բռնի մեջ կժողվինք քար, թուփ, ժեշտ, զանազան ջարդուկ պղնձի ամներ, վառող կլցինք, կրակ կտինք ինն, էմալ տրաքոց կեններ, մերը մանուկ կուրանար, էնոնք էլ «ռուսա գյալդի» կբռնին ու կփախնին...»: Հովհաննես Արդոյանը, արդարև, մեծ համբավ ու ժողովրդականություն է վայելել Բասար-էնչարի շրջանում: Նրան առ այսօր սիրով ու ջերմությամբ են հիշում համագյուղացիք: «Բասարգեղարցիք, որ թասիք ունենան, — ասում է բանասաց

² (Աշխ. աղագրություն և բանահյուսություն, պր. 14, Գեղարքունիք, կաղմեց Ռ. Հ. Գրիգորյանը, Երևան, 1983, էջ 203, 204):

Հայկազ Ղազարյանը, — Հովհաննեսի համար արձան պտի կայնցուն»³:

Իսկ թե որքանով էր պատմականորեն հավաստի վերոհիշյալ հուշապատումը, մենք կարողացանք ստուգել համաժամանակյա պատումների (թվով՝ 4) գրառմամբ և դրանց համադրմամբ⁴: Պարզվեց, որ պատմվող դեպքը ճշմարիտ է և անհրկբայելի: Հուշապատմող բանասացները մասնակի շեղումներով (համարյա մեծ մասամբ՝ հուզական բնույթի, և կամ էլ տեղի ունեցած դեպքի ստույգ օրվա ու ժամի շփոթություններ, որ հետևանք էր նրանց առաջացած տարիքի) պատմում էին նույն եղելության մասին, առանց էական տարբերության:

Մեր գրառումների ժամանակ գրանցվեցին նաև թուրքերեն և րդերի առանձին պատառիկներ, որոնց ստեղծման դրդապատճառները դարձյալ նախահնգափոխական Հայաստանում հրահրված իրադարձություններն են: Երգերի այդ պատառիկները հաղորդեց վարդենիսցի տարեց բանասաց Հայկազ Արզոյանը, որի երգացանկը հիմնականում բաղկացած էր թուրքերեն ողբերգերից: Պատմում էր իր հուշերը և պատմությունը համեմատ երգերով, ուր հաճախ հիշում էր Վոլոդյա և Սաշա անունները: Մեր հարցին, թե ովքեր են այդ մարդիկ, նա պատասխանեց. «Դերանք Սիլիկով հղբարներն էին», որոնք իրենց խմբով օգնության հասան բասարգեյարցիներին: 1918 թ. փետրվարի 13-ին նրանց դիմավորում է Հովհաննես Առզոյանը և հյուրընկալում իր հարկի տակ: Սիլիկով հղբարներից ավագին կոչել են Վոլոդյա, իսկ կրտսերին՝ Սաշա: «Սիլիկովների խումբ հենց որ կըխասի Հովհաննեսի տուն», այստեղ է գալիս Ջոդ գյուղի բեկերից Սամանդ աղան՝ դուրանը ձեռին, հավատարմության երգում տալիս և «պոկին» հրավիրում բաբկամական ճաշկերույթի: Հովհաննես Առզոյանը դեմ է լինում այդ հրավերին: «Սիլիկովներ դը ջայել ու անփորձ տղերք էին, ամեն մեկը 20-22 տարեկան», ընդունում են հրավերը, քանի որ ինչպես հուշապատմողն է վկայում, «նրանք կուգին գարի առնել հիրանց ձիերու խամար», նաև, հավանաբար, ցանկացել են խաղաղ ճանապարհով հաշտության գալ: Նրանք իրենց ողջ խմբով սպաներով ու զինվորներով, գնում են Ջոդ, ուղեկից ունենալով Հովհաննես Առզոյանի ավագ որդուն՝ Ռուբեն Առզոյանին, և մի քանի վարդենիսցիներ: Խումբը, Սամանդ աղայի բակ մտնելուն պես, հրաման է ստանում զենքերը վայր դնել: «Մենք հասկացանք, որ էս ճաշկերույթի բան չի»: Հյուրընկալները բոլորը զինված էին: Խմբի զինաթափումից հետո լսվում է Սամանդ աղայի բղավոցը՝ «վո՛ւրուն» (խփել):

Խումբը զոհ է գնում թշնամու դավադրությանը:

Այս հուշապատումը ներկայացրինք սեղմ գծերով, մինչդեռ հիմնական սյուժեին զուգահեռ վիպական շատ մոտիվներ կան կապված Սիլիկովների հերոսությունների, նրանց արժաթե թրի, ձիերի մասին: Այսպես, վերջիններիս խոստում կապված (Սիլիկովները, խնայելով իրենց հոգնած ձիերը, հյուրասիրության էին գնացել ուրիշ ձիերով), ծառս են լինում ճիշտ այն պահին, երբ նահատակվում էին իրենց տները, պատմում է Ռուբեն Առզոյանի եղբայրը՝ Հայկազ Առզոյանը: Ռուբենը հրաշքով փրկվում է այդ կոտորածից: Հայկազ Առզոյանը հուշերը պատմում էր հայերեն, իսկ երգային հատվածների գերակշիռ մասը երգում թուրքերեն և ապա թարգմանում էր հայերեն ու երգում: Ահա այդ երգերից մեկը՝ թարգմանաբար, որի յուրաքանչյուր քառատողին հաջորդում է «Քյաֆուր Սամանդ օլդուրդի բալալարիմ» («Անխիղճ Սամանդը սպանեց որդիներին») տողը:

³ ՀեՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ», Ռ. Հ. Գրիգորյանի ֆոնդ, 1982—1984 թթ. բանահյուսական նյութերի ձեռագիր ժողովածու:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Փետրվարի 13-ին
 Ղուռան բերին հերթվեցին,
 Մեղի Զոդ կանչեցին,
 Համա յաման կոտորեցին
 Քյաֆուր Սամանդ օլդուրդի բալալարիմ:
 Զոդի ճամբեն հելներ վերան,
 Հայեր գացին գյուլի բերան,
 Նրանք բերին հուրանց Ղուռան,
 Զայելներին խափին տարան
 Սաշա, Վալուդյայի գլուխները կտրեցին
 Ճակտներին գարի շարեցին,
 Գեղեգեղ ման տվեցին,
 Մեր ու մանուկ մղկտացին,
 Անտեր մներ Զոդի ճամփան,
 Մեր ջայելներն էնտեղ կորան...⁵

Այս հուշապատման շուրջ գրի են առնված թրջալեզու ավելի քան 15 ժողովրդական երգեր, որոնց մեջ գեղարվեստորեն վավերագրված են նախախորհրդային Հայաստանում կատարված համանման դեպքերը⁶։ Ինչպես կարելի է նկատել, վերոհիշյալ երգը ստեղծված է ավանդական պատմավիպական երգարվեստի առանձնահատկություններով, հանրաժանոթ «Հասան դալա» երգի կառուցվածքային և մեղեդային ավանդույթների որոշակի կիրառմամբ, որն հավաստում է պատմավիպական բանահյուսության ավանդների կենսունակությունն ու կայունությունը։

Այսպիսով, պատմական հուշապատումն, իբրև բանավոր արձակի մի տեսակ, ունի իր որոշակի նկարագիրը՝

Ա. Արտացոլում է պատմական իրադարձությունը, որը նրա հիմքն ու զրդապատճառն է։

Բ. Հուշապատումները պատմական համաժամանակյա դեպքերի արձագանքներ են և իբրև ականատես հուշապատմողի հաղորդածներ՝ հավաստի են ու հետևաբար իրական եղելությունների գրեթե անկողմնակալ անդրադարձումներ։

Գ. Հուշապատումը որոշակի դեր է կատարում պատմական երգերի իրական-պատմական հիմքերը բացահայտելու գործում և լույս է սփռում դրանց ստեղծման ժամանակի և հանդամանքների վրա։

Դ. Հուշապատումները բովանդակությամբ ու արժարժած խնդիրներով եզակի են, տեղական ու ազգային բնույթ ունեն և գուրկ են ղուգահեռ սյուժեներից։

МЕМОРАТ И ИСТОРИЧЕСКАЯ ПЕСНЯ В ГЕГАРКУНИКЕ

Р. А. ГРИГОРЯН

Резюме

В течение 1983—84 гг. на территории Гегаркуника нами было записано более десятка исторических сказов-меморатов, значительная часть которых относится к трагическим событиям дореволюционной Армении. Сказы записаны со слов сказителей-очевидцев и участников

⁵ Նույն տեղում։

⁶ Տե՛ս նույն տեղում։

этих событий. Это обстоятельство придает изложенному материалу достоверность.

Представленные сказы являются одним из видов устной прозы, отличаются жанровой своеобразием и определенностью и свидетельствуют о невозможности их появления без той реальной жизненной основы, которая является первопричиной их составления; о синхронности отображения исторических событий, вследствие чего сказы носят достоверный и объективный характер; о той роли, которую играют сказы в выявлении подлинной исторической основы эпических песен, проливая тем самым свет на обстоятельства и время их создания; об их уникальности и национальной основе, вытекающей из отсутствия аналогичных сюжетов не только в фольклоре других народов, но и в этнорегиональных группах армянского народа.